Պայմանագիր N
գովազդի տարածման մասին

ք.Երևան --.--.--16թ.

----------, այսուհետ Գովազդատու, ի դեմս Գործադիր տնօրեն՝ ---------- ---------- որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Մառ» բբը-ն այսուհետ Գովազդակիր, ի դեմս տնօրեն՝ Արման Հարությունյանի, որը գործում է կանոնդրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Գովազդակիրը պարտավորվում է տեղադրել Գովազդատուի սեփականությունը հանդիսացող գովազդային պաստառը 18 քմ. ընդհանուր մակերեսով Գովազդակիրի սեփականությունը հանդիսացող երկկողմ վահանակի վրա, տեղադրված Երևան -Երասխ- Գորիս Իրանի սահման Մ- 2 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի ------ կմ ձախ հատվածում 1 /մեկ/ տարի ժամկետով --.--.2016-ից մինչև --.--.2017թ.:
1.2 Գովազդատուն պարտավորվում է նշված ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գովազդակիրը պարտավորվում է՝
2.1.1 մատուցել 1.1 կետում նշված ծառայությունները
2.1.2 կատարել բոլոր համապատասխան շահագործման հետ կապված ծաղսումները և գովազդային մակերեսի վճարումները տեղական ինքնակառավարման մարմնին;
2.1.3 սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում ապահովել գովազդային վահանակի մաքրությունը:
2.1.4 գովազդային վահանակի վնասվելու կամ շարքից դուրս գալու դեպքում ողջամիտ ժամկետում վերանորոգել և վերականգնել նախնական տեսքը;
2.2 Գովազդատուն պարտավորվում է՝
2.2.1 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կատարել վճարումները
2.3. Գովազդատուն իրավունք ունի.
2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Գովազդակրի կատարած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
2.3.2. Գովազդակրի կատարած աշխատանքում թերություններ գտնելու դեպքում այդ մասին հայտնել Գովազդակրին հնարավոր նվազագույն ժամկետում դրանք վերացնելու համար,
2.4. Գովազդակիրը իրավունք ունի.
2.4.1. Գովազդատուից պահանջել վճարելու սահմանված վճարները:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Ամսեկան վարձը 1/մեկ/ քմ.-ի համար սահմանվում է ----- դր./երկու հազար հինգ հարյուր դրամ: Սույն պայմանագրի ընդհանուր արժեքը ամսեկան կազմում է -----դրամ /:

3.2 Գովազդատուն վճարումները կատարում է յուրաքանչյուր ամսվա համար հաշիվ-ապրանքագիր ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից հաշիվ ֆակտուրայի ստորագրումը համարվում է աշխատանքների ընդունում:
3.3 Սույն պայմանագիրը Գովազդատուի նախաձեռնությամբ վաղաժամկետ դադարեցնելու դեպքում Գովազդատուն Գովազդակրին վճարում է փաստացի մատուցած ծառայությունների դիմաց՝ համաձայն երկկողմանի ստորագրված փաստացի մատուցված ծառայությունների ընդունման-հանձման ակտի:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-մաժոր/

Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այն կողմը, որի պարտականությունների կատարումը ընդհատվում է այդ պատճառներով, պարտավոր է անհապաղ ծանուցել մյուս կողմին պարտականությունների ընդհատման կամ չկատարելու և դրա պատճառների մասին:

5.Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սույն պայմանագրով չնախատեսված դեպքում պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.Տուժանքներ և տույժեր

Սույն պայմանագրում նշված Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու համար Գովաղդակիրը վճարում է տույժ՝ ընդհանուր գումարի 0.5%-ի չափով յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար:
Սույն պայմանագրում նշված վճարման ժամկետները խախտելու համար Գովազդատուն վճարում է տույժ՝ չվճարված գումարի 0.5%-ի չափով յուրաքանչյուր ուշացված բանկային օրվա համար:
Տույժերի վճարումը չի ազատում Կոմղերի պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումից:

7.Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձվում է դատարանի քննությանը:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև երկկողմ պարտավորությունների կատարումը:
8.2 Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմի նախաձեռնությամբ՝ այդ մասին մեկ ամիս առաջ գրավոր ձևով ծանուցելով մյուս կողմին:

8.3 Պայմանագրի վաղաժամկետ լուծումը չի ազատում Կողմերին միմյանց հանդեպ մինչև դադարեցման օրը ծագած պարտավորությունների կատարումից:
8.4Այն բոլոր հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
8.5 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից,
ք ունեն
հավասարազոր իրավաբանական ուժ՝ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գովազդատու	Գովազդակիր
«---------- »	«Մառ» ԲԲԸ
Գրանցման և Գործունեության հասցե՝	Գրանցման և Գործունեության հասցե՝
ՀՀ, ք.Երևան, ----------	ՀՀ, ք. Եղեգնաձոր, Երևանյան խճ 4
«-բանկ», ՓԲԸ	«Արդշինինվեստբանկ»
Հ/Հ 00000000000000000000000	Եղեգնաձոր մասնաճյուղ
Գործադիր տնօրեն՝----------	տնօրեն՝ Արման Հարությունյան